կատարւելու են զանազան գործիքների և տեխնիկական կատարելագործութիւնների ցոյցեր։

23) Արդիւնահանդէսը վերջանալուց յետոյ, երեք օրւայ միջոցում, յետ են տրւելու հանդիսաքերներին ցուցառարկաները. իսկ մինչև այդ ժամանակը, ոչ ով իրաւունք չունի արդիւնահանդէսից վերցնելու ցուցառարկան։ Արդիւնահանդէսի փակւելուց երկու շաբաթ աւել մնացած ցուցառարկաների պահպանութեան համար Կարգադրիչ Մասնաժողովը իրան պատասխանատու չէ համարում։

Միւս անգամ կը ներկայացնենք ընթերցողներին արդիւնահանդէս բերւելու առարկաների ցուցակը։

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ.

«Մուրճ»-ի անցեալ համարում մենք պատմեցինք այն դէպքերը, որոնք տեղի ունեցան դրամատուրգ պ. Գաբրիէլ Սունդուկեանցի յոբելեանը տօնելու առիթով։ Բայց բոլոր փորձերը այդ յոբելեանին հրապարակական բնաւորութիւն տալու—ի դերև ելան պ. յոբելեարի մերժման պատճառով։ Բայց և այնպէս յոբելեանը տօնւած պիտի համարել—այդ են վկայում այն բազմաթիւ շնորհաւորութիւնները, որ ընդունած է «Պէպօ»-ի քանքարաւոր հեղինակը զանազան տեղերից, մօտիկ թէ հեռու։ Մենք չենք ուզում առիթը բաց թողնել ծանօթացնելու մեր ընթերցողներին, թէ որպիսի երախտագիտական զգացմունքով վերաբերւեց հայ հասարակութիւնը դէպի մի հեղինակ, որի քառորդ դարի գործունէութեանն ենք պարտական, որ այսօր հայութիւնը—առանց բեմ ունենալու—թատրոն ունի, առանց դերասանական խումբ ունենալու—դրամատիկական շկօլա և պատմութիւն ունի։

Ահա թէ ինչու, առանց ծանրութիւն զգալու, քաղցր պարտք ենք կատարում յիշատակելով Գաբրիէլ Սունդուկեանցի յոբելեանի առիթով եղած բոլոր ցոյցերը, որոնք, աղմուկից զուրկ լինելով հանդերձ, տօնւած, սիրւած և յարգւած հեղինակի մեծ ժողովրդականութեան բարձրախօս վկայութիւնն են տալիս, նա մանաւանդ որ տեղի ունեցած ցոյցերը եղած են բոլորովին ինքնաբերաբար, որպէս արդէն ամենքին յայտնի է։

Այդ ցոյցերը եղած են՝ անձնական այցելութիւններ յարգողների կողմից, հեռագիրներ, նամակներ, ուղերձներ, ստանաւորներ և պարգևներ։

Արդ, պ. Գ. Սունդուկեանցը, զիջանելով մեր առաջարկութեան, բարութիւն ունեցաւ հաղորդել մեզ բոլորը, ինչ վերաբերում է նորա յոբելեանին, և մենք համոզւած ենք, որ մեր ընթերցողները իրանց շնորհապարտ կը զգան մեծանուն հեղինակի սիրալիր վերաբերմունքի համար։

դէպի «Մուրճ»-ի խմբագրութիւնը։ Մանրամասնութիւնները, որ պիտի հետեւեն, աւելի քան մի չօշափման կէտեր ունին մեր գրականութեան և թատրոնական գործի հետ, բացի այն, որ նոքա մի որոշ չափով որոշում են մեր ժամանակւայ հասարակութեան բնաւորութիւնը։ Բայց քանի որ մեր ցանկութիւնն է եղած լիակատար տեղեկութիւններ տալ, ուստի առաջուց պիտի ներողութիւն խնդրենք թէ յօբէլեարի և թէ մեր կողմից, եթէ այս կամ այն անունը մոռացմամբ վրիպած չի լինի։

I. ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Սկսենք այցելողներից այն կարգով, որպէս երեւում է այդ այցեցուցակից և այցետոմսերից։ Անունները իրանք իրանց համար կը խօսեն։

1. *Զմշկեան Գէորգ։*
2. *Զմշկեան Սաթենիկ։*

Դոցա առիթով համեմատեցէք «Մուրճ»-ի № 1-ում տպած պ. Զմշկեանի յօդուածը։ Դոքա՝ պ. Սունդուկեանցի տիպերի ստեղծողներին են պատկանում։

3. *Տէր-Ղեւոնդեան Նիկ.*
4. *Շիրվանզադէ։*
5. *Կամսարական Կ.*
6. *Յովհաննիսեան Աբգար։*
7. *Յովհաննիսեան Դարիա։*
8. *Սուքիասեանց։*

   «Ես շատ բաղդաւոր եմ, որ 25 տարուց յետոյ, ինքս անձամբ բաղդ ունեցայ շնորհաւորելու իմ սիրելի և յարգելի «Գիշերվան սաբրը խէր է»-ի հեղինակին. ստորագրած՝ Արտաշէս (Օսկան Պետրովիչ)»։
   Գ. Սունդուկեանցի վկայութեամբ, պ. Արտ. Սուքիասեանցը նոյնն է, որ առաջին անգամ խաղաց Օսկան Պետրովիչի դերը։

9. *Ընֆիաճեանց Համբարձում։*
10. *Տէր-Աղէքսանդրեանց Գէորգ։*
11. *Տիգրանեանց Յակոբ։*
12. *Բեհբութով իշխ. Վ.*
13. *Տէր-Մարկոսեանց Յովհ.*
14. *Միրիմանեանց Բագրատ։*
15. *Միրիմանեանց Վերա։*
16. *Ամատունի, իշխ. Նապոլէոն։*
17. *Փիթոյեւ Իսայ։*
18. *Թաւաղեանց Մովսէս։*
19. *Տէր-Յովհաննիսեան Յակոբ։*
20. *Թամամշեանց Մ.*

21. Յովհաննիսեան Աբգար (կրկին)։
22. Փրիդոնեանց Գրիգոր։
23. Մելիք-Գարագեօզեանց Բ.
24. Տէր-Միքայէլեան Հայկ։
25. Եսայեանց Աղէք.
26. Եւանգուլեանց Գէորգ։
27. Շամշինով Ա.
28. Բաբանեանց Աբր.
29. Տէր-Գրիգորեանց Վանօ։
30. Մարտիրոսեանց Մնացական։
31. Իզմիրեանց Սօֆիա։ (Համեմ. «Մուրճ»-ի № 1)
32. Կորչիբաշեւ Սօֆիա, (մէկը այն երեք քոյրերից, որոնք յիշուած են «Պէպօ»-ի յառաջաբանում)։
33. Պռօշեան Պերճ։
34. Նազարեանց Տիգրան։
35. Leist Arthur.
36. Վարդանեան Փիլ.
37. Зобнинскій Пав. Ник.
38. Зобнинская Елиз. Петр.
39. Բախմետիեւ Ալեքս.
40. Բաշինջաղեան Գէորգ։
41. Зейдлицъ Никол.
42. Եաղուբեան Կարապետ։
43. Մելիք-Հայկազեան Աղէքսանդր։
44. Գրիգորեանց Գրիգ. քահանայ (Բաքուից)։
45. Բաբայեան Դօքտ. Աւ.
46. Արասխանեանց Աւետիք։
47. Քալանթար Ալեքս.
48. Մատինով Ալեքսանդր (քաղաքագլուխ Թիֆլիսի)։

«Եկայ մեծայարգ Գաբրիէլ Նիկիտիչի մօտ շնորհաւորելու նորա 25-ամեայ արդիւնաւէտ գրական գործունէութեան յոբէլեանը և սրտանց ցանկալու առողջութիւն երկար տարիներ, որպէս զի մեր հայրենական գրականութիւնը շարունակէ հարստանալ Գաբրիէլ Նիկիտիչի ստեղծագործութեան տիպարներով»։

49. Բեհբութեան Կոնստ. իշխ.
50. Եւանգուլեանց տիկին Եկատերինէ։
51. Քարամեանց Նիկող.
52. Բեհբութեան իշխ. Գրիգ. Յովհան.
53. Ենգիբարեան Գարեգին։

54. Ցարութիւնեանց, Իս.
55. Ցարոյ։
56. Ցովսէփեան Ղազարոս քահանայ։

II. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

1. Սունդուկեանցներ Գէորգ և Ալեքսանդր (յօրէլեարի որդիքը) և Նիկողայոս (եղբօր որդին), ուսանողներ։ Պետերբուրգ.
2. Մանդինեանց Սեդրակ։ Էջմիածին.

«Վատ կերպով լիշում եմ Ձեր փայլուն սկզբնաւորութիւնը. այն օրից, Դուք, թանկագին Գաբրիէլ, 25 տարի անփոփոխ կերպով գնացել էք Ձեր կոչման լեռից և անդադար հարստացրել էք հայկական բեպերտուարը թանկագին գործքերով. միանում եմ Ձեր տաղանդի բազմաթիւ գնահատողների հետ. սրտանց ողջունում եմ Ձեր քառորդ դարու բեղմնաւոր գործունէութիւնը»։

(Համեմատեցէք այս առիթով պ. Զմշկեանի լօդւածը «Մուրճ»-ի 1 №-ում)։

3. Հայ և վրացի ուսանողներ։ Պետերբուրգ.
4. Խմբագրութիւն «Արաքս»-ի։ Պետերբուրգ.
5. Հայ ուսանողներ Մոսկուայի համալ.

«Շնորհաւորում ենք Քեզ, միակ դրամատուրգին, որ գործել է քառորդ դար լօգուտ հայրենական դրականութեան և բեմի։ Ընդունիր մեր պատանեկական ողջոյրութիւնը և մեր սրտանց երախտագիտութիւնը այն բոլոր տիպերի համար, որ Դու այնքան կենդանի կերպով իրական կեանքից դուրս խլեցիր, Քո խորին ատելութեան համար դէպի հասարակական կեանքը անբարոյականացնող տարրերը և Քո քնքուշ համակրութեան համար դէպի ճնշուածները և անպատուածները։ Մաղթում ենք որ Քո մարակող ձայնը այսուհետև ևս չը լռի. կեցցես Դու շատ տարիներ»։

Հայ ուսանողներ։

Պատասխան.

«Սրտանց շնորհակալ եմ։ Մաղթում եմ, որ Տէրը օգնէ Ձեզ մոցնել լոյսը և լուսաւորութեան ջերմութիւնը հասարակութեան խաւար խաւերը, որոնք չէզոքացնում են մեր լաւագոյն ոյժերը։ Դուք՝ իմ իդէալն էք, Դուք՝ բարի ոգին էք մեր ազգի։ Ապրեցէք, ողջ եղէք, ծաղկեցէք»։

(ստորագրած) Սունդուկեանց։

6. Վրաց ուսանողներ։ Մոսկուա։
7. Քանանեանց Գէորգ, (վերատեսուչ Լազարեան ճեմարանի)։ Մոսկուա։
8. Հայ ուսանողներ։ Նոր-Ալեքսանդրիա։ (Գիւղատնտեսակ. ինստիտուտ)։
9. Զալխուշեան Սոֆիա և Գրիգոր։ Նոր-Նախիջևան։
10. Ուսուցչական խումբը Ղզլարի հայոց դպրոցների։ Ղզլար։

11. Մկրտումեան Գէորգ քահանայ. Ղզլար։
12. Մախաթաձէ։ Պետաիզօրսկ։
13. Մեսխիեվ՝ Օլգա, Վարվարա, Նիկոլայ (գաւառապետ), Անդրոնիկովա Նինա և Քալանթարեան։ Սղնախ։
14. Ցարգողներ։ Սղնախ։
15. Յովհաննիսեան Վարսենիկ, Գրիգորեանց Սոֆիա, Գրիգորեանց, Մառանկողեանց, Ղազարեանց, Պետրոսեանց, Տէր-Գրիգորեանց, Կոստաջեանց, Մարգարեանց։ Կարս։
16. Միրզաբէկեանցի գործարան։ Բաքու։
17. Հայոց հասարակութիւնը և մի խումբ մարդ և կին թատերասէրներ։
18. Շակով՝ բժիշկ և կամնարական՝ անտառապետ։ Դիլիջան։
19. «Պեպո»-ի ներկայացմանը ժողովուած հասարակութիւնը։ Երևան։
20. Հայոց Բարեգործական Ընկերութեան տեղական վարչութիւնը։ Երևան.
21. Վխոման տիկին։ Օդեսսա։
22. Տէր-Միքայէլեանց, ուսանող։ Ենա։
23. Մելքումեան, Բուդաղեան, Լիսիցեանց (հայերէն ոտանաւոր հեռագիր)։
24. Кульжинскій Алексѣй, կառավ. պետակ. բանկի բաժնի։ Տագանրոգ։

III. ՆԱՄԱԿՆԵՐ

1. Սունդուկեանց Յովհաննէս (եղբօր որդին դրամատուրգի)։ Թիֆլիս։

(Երկար. բայց և մտքով և զգացումով լիքը նամակից քաղում ենք հետևեալ կտորը, որի մէջ նաև կրիտիկոսը, ինչպէս մեզ թւում է, կը գտնէ դիտողական ինքնուրոյութիւն)։

«Թանկագին. ամեն մարդ, ով Ձեզ մօտիկուց ճանաչում է, Ձեր «Պեպո» կարդալով, տեղ-տեղ, երբ հերոսը երկար մենախօսութիւններ է արտասանում, «Պեպո»-ի մէջ Ձեզ է գտնում, Ձեր իդէալական հոգին, Ձեր բարի անունը, Ձեր անդրդուելի շիտակութիւնը. և այն ժամանակ «Պեպո» դառնում է աւելի իրական մի տիպար... Ձեր Պեպոն տաքացաւ—դա՝ Գաբրիէլն է, որ չարացաւ. բայց հրէա՝ նա հանդարտուեց, մոռացաւ ամեն բան, նա արդէն իւր թշնամուն սկսեց պաշտպանել և Կակուլիին խորհուրդ չէ տալիս նոցա (թշնամիների) հետ վատ վարուել («Մուլավ, Կակուլի, էտ մարթուքին չէ)...»։

«Այո! Պեպոի ներքին ես-ը անքակտելի կերպով կապուած է Ձեր սեպհական ես-ի հետ։ Ստեղծելով Արութինին, Սարքիսովին, Վանոյին և ուրիշներին, Դուք, ինչպէս ես համոզուած եմ, շատ էլ չէիք դադրում, որովհետև Դուք նոցա նկարում էիք բնութիւնից. բայց ստեղծելով Պեպոին, Միքայէլին, Լևոնին, Արտաշէսին [1]) և միւսներին, Դուք դադրում էիք, Դուք պէտք է դադրում լինէիք, որովհետև Ձեր ես-ի ամբողջ կէսը Դուք խլում էիք Ձեզնից և դնում Պեպոի ես-ի մէջ»։

[1]) Լևոնը և Արտաշէսը «Ամուսիններ» պիեսի մէջ։ Խմբ.

2. Յովսէփեան Ղազարոս քահանայ։
3. Իւզբաշեան Սարգիս, գնդապետ։ Պետերբուրգ։

«...ինձ թւում է, թէ Դուք երկար ժամանակ գործում էիք այսպիսի մի հայկական նշանաբանի ներքոյ՝ «միշտ գործել, միշտ տալ և միշտ լռել»։

4. Բարխուդարեանց Մկրտիչ։ Մոսկւա։
5. Գրիգորեանց Գրիգոր քահանայ, նաև ուրիշների կողմից։ Բաքու։
6. Սաֆրազեան ամուսինների դիմաց՝ (Թաւրիզ) Քրիստափոր Թաղէոսեան։ Թիֆլիս։
7. Նահապետեան Արշակ, Տեսուչ Գէորգեան ճեմարանի։ Էջմիածին։
8. Տէր-Մարտիրոսեանց։ Երևան։
9. Ալիխանեան Նիկողայոս, Հին-Բիխով։
10. Վրոյր, Ա. Մ. Կ. Պօլիս։
11. Տէր-Միրաքեանց Յովհաննէս՝ ի դիմաց թատերասէրների խմբի։ (Նաև մի աֆիշ «Քանդած օջախ», «Գիշերվա սաբրը խէր է», ներկայացրած 22 դեկտ. 1888 թ.)։
12. Շահ-Պարոնեանց, բժշկապետ։ Թիֆլիս։
13. Զուբար, ի դիմաց հայ թատերասէրների։ Պետերբուրգ։
14. Կաչերգին Կոնստանդին։ Դերբենտ։
15. Վխոման, տիկին Ալեքսանդրա։

Պ. Սունդուկեանցը պատմում է, թէ Պեատիգօրսկ եղած ժամանակ, 1887 թ. ամառը, որտեղ նա թելադրում էր իւր «Ամուսինները»-ը պ. Վահան Մամիկոնեանին, իսկ առաջ իւր ամուսին Սօֆիային և դստեր Նունէին և Կատարինէին, որպէս նաև պ. Գ. Ջմշկեանին. սոցա առժամանակեայ բացակայութեան պատճառով, դժւարութեան մէջ ընկաւ հեղինակը։ Տիկին Վխոմանը առաջարկեց նորան իւր ծառայութիւնը։

—Ախար Դուք հայերէն չը գիտէք։

—Այդ վնաս չունի, Դուք մտածեցէք հայերէն և այդ հայերէն մտածածը ինձ ռուսերէն բառ առ բառ թարգմանութեամբ թելադրեցէք, իսկ յետոյ...

—Բայց ախար եթէ հայերէն մտածելով և բառացի թարգմանութեամբ թելադրեմ, միտք չի դուրս գալ և Դուք ոչինչ չէք հասկանալ, տիկին։

—Այդ ոչինչ, Գաբրիէլ Նիկիտիչ, за то Դուք կը հասկանաք. իսկ դա՝ գլխաւորն է։ Այդպիսի սիրալիրութեան առջև հայ դրամատուրգը զիջեց, թելադրելով «Ամուսինները»-ի երկրորդ գործողութեան երրորդ տեսիլը՝ Մարգարտի և Հեղինէի խօսակցութիւնը, նոցա փոխադարձ գանգատը—ռուսերէն լեզուով, որից յետոյ Թիֆլիս գալով, հայերէնի վերածեց, ռուսերէն բառերի տեղ ուղղակի հայերէն բառերը դնելով—չէ թէ ռուսերէնը մտածուած էր հայերէն!

IV. ՈՒՂԵՐՁՆԵՐ.

1. Մարիամեան-Յովհաննեան Դպրոցի ուսուցիչներ և ուսուցչուհիներ (16 ստորագրութիւն). Ներկայացուցիչ՝ տեսուչը դպրոցի պ. Փիլիպպոս Վարդանեան. Թիֆլիս.
2. Թաւրիզի հայ հասարակութիւնը (20 ստորագրութիւն, ի միջի այլոց՝ Ծառուր-խան Սեթխանեան, Առաքել Համբարձումեան, Սաֆրազեան ամուսիններ և այլն). Ներկայացուցիչ՝ տիկին Հեղինէ Համբարձումեան.
3. Խարկովի հայ ուսանողութիւն. (60 ստորագրութիւն). Ուղերձը դրած է թաւշեայ մեծադիր և շքեղ կազմի մէջ, որի երեսին, բառերի գեղեցիկ դասաւորութեամբ, գրած է հայերէն լեզուով և լատիներէն տառերով

25 amia hobeliani arithov Gabriel Sundukianzin Charkovi hai usanogneritz. 1888 ami 22, dectemberi. Charkov.

Ներկայացուցիչներ՝ հայ ուսանողներ պ. Վ. Լունկեւիչ և Գ. Շաումեան.

4. Օդեսայի հայ ուսանողութիւնը (15 ստորագրութիւն). Ուղերձը դրած է թաւշապատ և Օթելլոյից մի տեսարան ներկայացնող մետաղեայ բելիեֆ երեսով ալբոմի մէջ՝ պատշաճաւոր լուսանկարներով օտար և մեր թատրոնական աշխարհից. Ներկայացուցիչ՝ Աւ. Արասխանեանց.
5. Պետերբուրգի հայ ուսանողութիւնից. Ուղերձը դրած է սև կաշէ թերթապահի մէջ. Ներկայացուցիչ՝ պ. Կ. Նաղուբեան.
6. Պետերբուրգի հայ հասարակութիւնը (39 ստորագրութիւն). Ուղերձը դրած է թաւշեայ շքեղ կազմի մէջ, որի երեսին յօբէլեարի անուն-աղգանունի արծաթեայ սկզբնատառերն են խաչաձև կպցրած. Ներկայացուցիչ՝ պ. Ալեքս. Քալանթար.

V. ՊԱՐԳԵՒՆԵՐ

1. Բաշինջաղեան Գէորգ. Թխտենին. մի գեղեցիկ պատկեր, ըստ մեզ, ամենալաջողածը երիտասարդ նկարչի արհեստանոցից ցայժմ դուրս բերած բոլոր ձիթանկար պատկերներից. Դա մի պարզ և ոչ մեծ պատկեր է, որը ներկայացնում է թխտենու (береза) մի հսկայ ծառի բունը՝ ընդարձակ և ամայի մի դաշտում, հեռաւոր հորիզոնով. Գաղափարաբար, դա՝ Սունդուկեանցն է հայկական թատերագրութեան ամայութեան մէջ. Թիֆլիս.
2. Բաշինջաղեան Յովհաննէս և Կիկիանի Պաւլէ, (լուսանկարներ). Յօբէլեարի խոշորացրած սալօնական լուսանկարը պատշաճաւոր շրջանակով. Նոմօյերկասկ.
3. Մի խումբ հայ երիտասարդներ. Յօբէլեարի կաբինետ-պատկերը՝ թաւշեայ երկդռնակ սիրուն տուփի մէջ. Պետերբուրգ.

4. Հայոց Բարեգործական Ընկերութեան Շուշայ տեղական վարչութեան անդամները։ Մի բակկարաչ բաժակ, արծաթեայ բաժակակալով և արծաթեայ նրբաձև գդալով՝ բոլորը մի չքեղ տուփի մէջ։ Շուշի։

Յօբէլեարը, վերջինիս փոխարէն, շտապել է պատասխանել՝ նուիրելով իւր երկասիրութիւններից 100 օրինակ՝ յօգուտ Բարեգ. Ընկ. Շուշայ տեղական բաժնի։

5. Երիցեան Աղէքսանդր։ Իւր աշխատասիրած „Театръ въ Тифлисѣ 1845—1856“. Тифлисъ, 1888. փառակազմ։

«Հայոց թատրոնի փիր ու հաւատ Գաբրիէլին, ի վիշատակ 1863—1888 թ. 25-ամեակի, ամենայն լարգանօք... 23 հոկտեմբ. 1888 թ. Թիֆլիս»։

6. Նաւասարդեանց Տիգրան։ Իւր «Հէքիաթների» ժողովածուի ցայժմ լոյս տեսած բոլոր չորս տետրակները։

7. Բարխուդարեանց Մկրտիչ։ «Հանդէս Գրականական և Պատմական»։ Առաջին գիրք։ Մոսկուա, 1888։

8. Շիրվանզադէ։ Իւր չորս հեղինակութիւնները։

9. Զմշկեան Մ. Իւր կազմած և «Աղբիւր»-ի հրատարակած «Օրացոյց 1889 թ.» (մի ոսոնաւոր ուղերձով)։

10. Նազարեանց Տիգրան։ Իւր հրատարակած «Օրացոյցը»։

11. Մարտիրոսեանց Մնացական։ Մեծ ծաղկէ փունջ։

VI. ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

1. Գամառ-Քաթիպա։ (Ռաֆ. Պատկանեան)։

«Գաբրիէլ Սունդուկեանցի պատկերի տակ։ 23 դեկտ. 1888 թ.

Աղգիս չարաւոտ վէրքը լուանալ,
Լիրբ մեծատուներն անվախ ապտակել,
Գոհարով ծածկած կեղտերը բանալ,
Կեղծաւորների դիմակը պոկել
Ու հէգ կինտոին դընել մարդոց շար—
Այդ ամենն զօրեց միայն քու հանճար։

Գամառ-Քաթիպա»։

2. Ալիխանեան Նիկողայոս։ Հին-Բիխով։

3. Մարտիրոսեանց Դէորգ։ Թիֆլիս։

4. Տէր-Մարտիրոսեանց Յովհաննէս։

5. Զմշկեան Մ. (Թիֆլիսի բարբառով)։ Թիֆլիս։

6. Թադէոսեան Քրիստափոր։ Թիֆլիս։

«Կայ մի մեծ ճահիճ—նա կեանք է կոչւում,
Նորա երեսը ծածկուած է քօղով։

Այդ քաղի տակը ճիճուք են վիստում
Իրանց գարշելի ղաղիր գործերով։
Դու վեր քաշեցիր այդ քաղ համարձակ,
Եւ նորա տակից ցոյց տուիր մեզի
Իսկական դոյնով մեր կեանք խայտառակ,
Որտեղ աղնիւը, բարին մուտք չունի։
Դու լոյս հանեցիր այդ խաւար աշխարհ,
Նորա մէջ սիրող կեղտը մերկացրիր.
Դու առաջինը, դու, հզօր հանճար,
Մեր տգեղ կեանքը ազատ ծաղրեցիր»։

7. Զուարեանց օր. Ե. Դերբենտ։

. . . . . .

Թէև ես չունիմ
Հանճար կամ տաղանդ
Եւ ոչ թանկագին
Գոհար ազատանդ,

Որ կարենալի
Փոքրիկ մի նուէր
Տալ բարերարիդ,
Ցիշատակ իբրև—

Ունիմ ես միայն
Սրտումս պարզ սէր,
Որ թեւադրում է
Այս քանի տողեր։

Ցուսամ կ'ընդունէք
Անարհամարհանք
Համեստ հայուհու
Անկեղծ համակրանք։

Կարծում ենք, որ աւելի քաղցր խօսքերով չէր կարելի վերջ տալ մի ջօրէլեանի նկարագրութեան։